հրամանատարը նրան եւս աքսորում է Շուշուց։

Ընթերցողը պարզ տեսնում է, թէ որ աստիճան անգլիական հրամանատարները (Բաղուի եւ Շուշուայ) պաշտպանում են եղել Ադրբէյջանի շահերը։ Նրանք ամէն կերպ աշխատել են Ղարաբաղ-Զանգեզուրը ենթարկել Ադրբէյջանին։ բայց մինչ էլ անյաջողութեան են մատնուել նրանց բոլոր ծրագիրները։

Քաղաքի դրութիւնը քանի գնում ծանրանում ու վատթարանում էր։

Այն, որ Ֆ. Սուլթանովը չէր մտածում ու չէր համարձակւում անելու, Շուշուայ անգլ. հրամանատարի թելադրութեամբ արւում էր։ Միւս կողմից էլ Սոկրատ բէկի դրդմամբ, Ղարաղըշլաղի գաղթականութեան մի մասը անկարգութիւններ էր առաջ բերում քաղաքում։

Երբ Շուշուայ Ազգային Խորհրդի պատուիրակութիւնը հասնում է Բաղու, բանակցութեան մէջ է մտնում Բաղուի անգլ. հրամանատարի հետ։ Անգլ. հրամանատարը, անշուշտ Ադրբէյջանի կառավարութեան կարծիքը վաղօրօք իմանալուց յետոյ, ցանկութիւն է յայտնում անձամբ տեսնուելու Ղարաբաղի հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ։ Այդ պատճառով էլ պատուիրակութեան միջոցով յայտնում է Շուշուայ Ազգ. Խորհրդին, որ նոր համագումար հրաւիրուի։

Շուշուայ Ազգ. Խորհուրդը Ապրիլ 23-ին հինգերորդ համագումարն է հրաւիրում Շուշում։

Հինգերորդ համագումարի մէկ նիստին ներկայ են լինում՝ անգլիական հրամանատարութեան կողմից՝ Զօրավար Շատիլուորդը. իսկ Ադրբէյջանի կառավարութեան կողմից՝ Ֆ. Սուլթանովը։

Երկուսն էլ երկար խօսում են. Շատիլուորթը անգլիերէն, որը եւ թարգմանւում է. իսկ Սուլթանովը Կովկասի թուրքերէնով եւ ամէն կերպ աշխատում են համոզել հայ պատգամաւորներին, որպէսզի ընդունին Ադրբէյջանի ժամանակաւոր իշխանութիւնը։ Սակայն համագումարի պատգամաւորները ուժեղ կերպով պատասխանում են երկու հոգուն եւ չեշտում, որ Ղարաբաղը, աշխարհագրականօրէն, ազգագրականօրէն եւ պատմականօրէն Հայաստանի անբաժան մասն է եւ թէկուզ ժամանակաւորապէս Ադրբէյջանին ենթարկուելու խօսք կարող չի լինել։

Այս բոլորից յետոյ, համագումարը հետեւեալ քանաձեւն է հանում.—

«Ղարաբաղի 5-րդ համագումարը, կանգնած լինելով 4-րդ համագումարի քաղաքական որոշման տեսակէտի վրայ, վերջին անգամ պարզորոշ կերպով յայտարարում է, որ հինգերորդ համագումարը չի կարող ընդունել Ադրբէյջանի թէկուզ ժամանակաւոր իշխանութիւնը եւ ան իր բախտը ընդմիշտ կապել է Հայաստանի կառավարութեան հետ»։

Անգլիական միսիան, տեսնելով որ իր դծած ծրագրով չի կարողանում, թէկուզ ժամանակաւորապէս, ենթարկել տալ Ղարաբաղի հայութեանը Ադրբէյջանի կառավարութեան, Ֆ. Սուլթանովին դաղտնի կերպով թելադրում է զինուորական ուժով մտնել Շուշուայ հայկական թաղը եւ գրաւել ռուսներից մնացած զօրանոցը, որտեղ զինուորական շտաբի վաշտն էր ապրում։

Մայիսի վերջերին, Շուշուայ թաթարները սկսում են նորոգել հայ-թրքական կռիւներից մնացած իրենց դիրքերը։

Հայերն էլ տեսնելով որ հարեւան թաթարները կռուի պատրաստութիւնների մէջ են, իրենք էլ իրենց դիրքերն են նորոգում եւ մի տեսակ լարուած դրութիւն է ստեղծւում։

Հայերը երբեք տրամադիր չէին որեւէ ընդհարում առաջ բերելու եւ ամէն կերպ աշխատում էին խաղաղ ճանապարհով Ղարաբաղի հարցը պաշտպանել, մինչեւ որ վերջնականապէս երկու ժողովուրդների համաձայնութեամբ, խաղաղ խորհրդաժողովներում կ'որոշուի։

Իսկ Ադրբէյջանի կառավարութիւնը, յանձինս անգլիական մանուածապատ քաղաքականութեան, ընդհակառակն էր անում, ամէն կերպ աշխատում էր երկու ժողովրդին լարել իրար դէմ եւ կռիւներ առաջ բերել։

Նոյն օրերին, Սուլթանովը ձեւականութեան համար դիմում է Ազգային Խորհրդին եւ առաջարկում է զօրանոցը դատարկել եւ յանձնել իրեն. բայց Ազգային Խորհուրդը մերժում է այդ դիմումը, պատճառաբանելով որ զօրա-